

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ.:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից համարատան մէջ:

Օտարապետացիք սխմում են ողջովի:

Тифлис. Редакция «Мелі»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ:

(Գրքերի կիրառի եւ տնային օրհրդից):

Հայտարարութիւնները ընդունվում է մինչև լիցքով:

Հայտարարութիւնների համար վճարում են:

Խմբագրատունը բաց է 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ է ջարդկանքից: Ներքին լուրերը—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց խնդիր: Անգլիա: Ամերիկա: Նամակ թիւրքալից—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հանապարհորդութիւն ղէպի փոքր-Մասիսի գագաթը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾԱՂԿԱԶՈՐԻՑ

Օգոստոսի 20

Ամեն տարի ապրիլի և մայիսի ամիսներում Երևանի նահանգական կառավարութիւնը պատրաստութիւն է տեսնում ջարդկանքում ամառային միջոցը կազմակերպելու մէջ կամ երկու կապալուռներին հետ, որ նրանք հայկաթիւն դիւանական ծառայողներին կենսական ուսուցանող միջոցները հաց, միս, խմիչք և այլն: Այս տարի գարնանը պ. նահանգապետ գեներալ Դաւիթով, մասնաժողով կազմեց իւրաքանչիւր դիւանատան պատգամաւորներին, որ մի կերպ ազատի կապալուռներին ձեռքից մեր աստիճանաւորների երեք ամսվայ, ևս առաւել ստորին աստիճանաւորների դրութիւնը, որ ջարդկանքում լինի կամաւոր առևտուր կենսական պիտոյքներ: Բայց դժբաղդաբար այդ չափովից, Կարձեալ հացի, մսի և խմիչքի համար պայման կապակցեալ մէկ վաճառականի հետ, որը պարտաւորվեցաւ այդ վերոյիշեալ միջոցները ծախել այն գնեալով, ինչ որ կայ Երևանում: Բնական կէս կոպէկ իւրաքանչիւր ֆունտի վրա աւել, իսկ միւս ուսուցիչից պայարները կամաւոր առևտուրով Պ. նահանգապետը նկատելով որ թերի մնաց իր կամքը, այստեղի կամաւոր առևտուրի մասին, երկար խորհուրդ անելուց յետոյ, կազմեց մի

նոր մասնաժողով, որը բաղկանում է մէկ նախագահից և երեք անդամներից, որին յանձնեց առանց սովորի 400 րուբլ. դրամ փոխարինաբար և այստեղի մի արքունական տուն չորս սենեակից, որ մասնաժողովը փոխ առած զբամալը կարգադրի կազմելու մէջ ընկերական ճաշատուն (артельная столовая), սակաւ ուժիկ ստացող դիւանատներում ծառայող աստիճանաւորներին, ևս առաւել գրադիրներին նիւթական օգնութիւն հասցնելու համար: Արդարեւ այդ բարի նպատակը պ. նահանգապետի պատկերացաւ մեծ աջողութեամբ: Մասնաժողովը մայիս ամսում Երևանում աշխատեց էփան գներով ճաշարանի համար ձեռք բերել սեղաններ, աթոռներ և ամեն տեսակ որպէս սեղանատան, նոյնպէս խոհանոցի համար իրեղէններ ու ամանները: 30 հոգու համար, վարձեց մէկ լաւ խոհարար և երկու ծառայ, մասնաժողովը կազմեց կանոններ այդ ճաշատան համար: Անցեալ յունիս ամսի 16-ից ընկերական ճաշատունը բացվեցաւ: Այժմ երեսուն հոգի արտիճանաւորներ, որոնց մեծ մասը ամուսնացած չեն, ճաշում են այդտեղ: Իւրաքանչիւր օրը պատրաստվում են երեք տեսակ կիրակուրներ, երկուսը ճաշին և մէկը ընթրիքին: Իսկ կիրակի և տոնի օրերը ճաշին երեք կերակուր, մաքուր և լաւ պատրաստված: Այժմ ընտանեաց տէր աստիճանաւորներից շատերը նախանձում են ընկերութեան ճաշարանին վրա: Հաշտան համար բոլոր գնած իրեղէնների փողի գումարը հասաւ 250 ր.: Յունիսի 15-ից մինչև օգոստոսի 1-ը մասնաժողովը հաշիւ տեսաւ, որից երեսոյ որ այդ միջոցին պատրաստվել է մօտ 3,200 ռաբլին կերակուր (порция) ամեն մի բաժինը արժեցաւ 10—12 1/2 կոպ. հացի հետ, չը նայելով որ մեզում հացի ֆունտը յունիս ամսին ծախվում էր 4 Կ. մսի ֆունտը 10 Կ., միւս ուսուցիչները նոյնպէս թանկ: Մասնաժողովը միջոց որ ծախս արած է փոխ առած գումարը լրացնելու համար երեք ամսվայ վրա բաժանի և ամեն մի բաժին կերակուր

կրի վրա հաշիւ երկու կոպէկ, որ փոխառած գումարը լրացվի այդ վերադիրը աւել ուժիկ ըստացող աստիճանաւորների վրա դրվեցաւ: Այդպէս երեք ամսվայ ընթացքում կը լրացվի այդ գումարը, իսկ իրեղէնները կը մնան յօգուտ ճաշարանի: Պիտի ասեմ որ յուլիս ամսին կերակրի բաժինը էփան եղաւ, որովհետև հացի ֆունտը ծախվեցաւ 3 1/2 կոպ., իսկ մսինը 8 1/2 կոպ.: Աստիճանաւորները ոչ թէ ստանում են կերակուրը բաժիններով, ինչպէս հիւրանոցներում, մանաւանդ ջրալի կերակուրները, այլ ուսում են անքան որքան ցանկանում են: Գիշերները աստիճանաւորներին, որոնք ցանկանում են թուղթ խաղալու, տուած է իրաւունք ժողովել ճաշատուն երկու առանձին սենեակներում և խաղալ: Արդիւնքը թղթախաղութեան եկամուտ է գրվում ընկերութեան ճաշարանին: Մասնաժողովի կարգադրութեամբ ընտրվեցան եօթ անձինք ճաշանոցներից հերթապաններ, որոց պարտքն է կարգ ու կանոն պահպանել ճաշատանը: Հաշանոցները բաղկանում են զիւսանաւորների մէջ ծառայող հայ, ռուս և թուրք աստիճանաւորներից, որոնք իրանց ճաշի վարձը հատուցանում են միշտ ամսվայ վերջին, երբ ուժիկները ստանում են: Ամսոյ 16-ին սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնի օրը այստեղ խիստ չքեղ կատարվեցաւ: Սուրբ պատարագից յետոյ կատարվեցաւ խաղող օրհնութեան խորհուրդը: Կեծ աղպարութիւն ունեցաւ ժողովրդի վրա քարոզը, որը կարգաց այդ օրը մեր առաջնորդ Գեորգ վարդապետ Սուրենյանց: Քարոզը վերաբերում էր վերափոխման տօնին: Ընդամեն միս բերեց ժողովրդի ուշադրութեան, որ նա իր նիւթական օժանդակութեամբ պիտի պաշտպանի Լ. ջառիսի վաճառի աւերակները: Այդ օրը եկեղեցին լի էր հայ և ռուս ժողովրդականներով և եկեղեցում ներկայ էր պ. նահանգապետը և միւս մի քանի բարձր աստիճանաւորները: Այս տարի Երևանում շատ ջերմ լինելու պատ

ճառով ջարդկանքը ամառանոց շատ ընտանիքներ են եկել: Բայցապ որ այստեղ աներ չը լինելու պատճառով Երևանի մի քանի խաները, բէկերը և հարուստ վաճառականները մեծ փողերով վարձել են մալականների գոմերը, զարգարելով նրանց՝ խորատանի խալիներով և ֆիւրդիստանի փաղաններով: Պիտի ասեմ որ երևանցիք շատ անտարբեր և անհոգ մարդիկ են: Քանի տարի սրանից առաջ տէրութեան կողմից կարգադրված է, թէ ով որ ցանկանայ յիւսեթիւն անելու այստեղ, կարող է գնել թագաւորական հող ջարդկանքում 150 մինչև 300 սաժէն, կամ իր բնակիչու համար կամ վարձով տալու, և տարեկան տալ գանձարանին սաժէնից 2 կոպէկ, հողը մնալով աւանդի սեպականութիւն որդոյ որդի: Չորս կամ հինգ մարդ միմյան չինել են իրանց համար աներ, միւս հողերը, հարկը կտորից աւելի, մնում են պարագայ թէ ինչ են մըտածում մեր հարուստ վաճառականները և մուլքատէրերը յայտնի չէ, զրկելով իրանց այստեղի պատուական օրից և ջրից, այլ դատաւարտելով իրանց անձը Երևանի անտանիկ օդին և մօժակներին ու մլաքներին խայթմունքին: ***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Կոստանտին Եղիազարեանից 4 ր., «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար: Առաջվայ փողերի հետ կանի 325 րուբլ.:

Ստացանք ՅԱՐԻՑԻՆԻՑ, պ. Չախմաստազեանի ձեռքով 80 րուբլ., տաս բաժանորդ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար: Առաջվայ փողերի հետ կանի ուրեմն, 405 րուբլ.:

ՄՕՁԴՈՎԻՑ մեզ հղում են: Պ. Կարապետ Իշխանեանց, որ երկնակամ է ծանր դատաստանական գործին, խոստացել է որ եթէ ազատ

Մարտիրոս, ինչ ես կարծում, կարելի է արդեօք բարձրանալ մեծ Մասիսի գագաթը: «Չէ, աղա ջան», պատասխանեց Մարտիրոսը, «Սուրբ Զակարը ինքն փորձեց բարձրանալ, որ Նոյի տապանը համբուրի, նա ամեն օր էնքան էր բարձրանում, որ հը մի քիչ էր մնում որ տեղը հասնի, մուկն ընկնում էր և սուրբ Զակարը հոգնած պարկում էր քնելու, բայց առաւօտ դարձելով տեսնում էր որ Մասիսի տակն, է՛հ, ներքեւն է պարկած: Այդ կը նշանակի, աղա ջան, որ Աստուածանից հրաման չը կայ մեծ Մասիսի գլուխն ելնելու: Աստուած տեսնելով սուրբ Զակարայ փափաքը տուեց հրեշտակին տապանի փայտից, որ սուրբ Զակարը համբուրի, է՛հ որ նա սուրբ էր, աղա ջան: Ի հարկէ, որտեղ նա տապանի փայտը համբուրեց, այնտեղ վանք չինեց՝ սուրբ Զակարայ վանքը, մեռնեմ նրա սուրբ զօրութեանին: — Մարտիրոս, ուրեմն ասում ես, որ չէ կարելի—Չէ, աղա ջան, սուրբ Զակարը որ սուրբ մարդ էր, նրան էլ Աստուած հրաման չը տուեց, զէ՛ս մենք, դու ինքդ գիտես, որ մեղաւոր մարդիկ ենք, մեզ խօ հրաման չը կայ ու չը կայ: Թեկէ հանիր ուղածդ, հրաման չը կայ: Այ՛ սրա գլուխը կեղնեց Աստուած յաջողայ, ասեց Մարտիրոսը, ցոյց տալով փոքր Մասիսը: Եւ լռեցի և մենք սկսեցինք բարձրանալ: Եւ մտածում էի, ինչի ժողովուրդը պէտք է կարձէ, թէ Աստուած ծային հրաման չը կայ, երբ բնական զուգորութիւններ կան:

Մենք բարձրանում էինք արևմտեան կողմից: Նկատելով գագաթի վրա ամրոցի պարսպի նման բարձրութիւն, ուղիղ դիմացինը ղէպի այդ տեղը, փոքր Մասիսի արևմտեան կողմից, Ստորոգ փոքր ինչ քարքարոտ, բայց կանանչապատ է: Բարձրանալով, բոյսերի տեսակները պակասում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԱԳԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ԳԵՊԻ ՓՈՌԲ ՄԱՍԻՍԻ ԿԱՄ ՓՈՌԲ ԱՐԱՐԱՍԻ ԳԱԳԱԹԸ

1881 թ. յուլիսի 17-ին

Փոքր Մասիսին ինչպէս Արարատեան *) բարձրութիւններից երկրորդը (մեծ Մասիսից կամ մեծ Արարատից յետոյ), ունի իր ազդեցութիւնը ժողովրդի երևակայութեան վրա: Դա կօժանձն բարձրանում է Արարատեան լեռների չղթայից, մեծ Մասիսի դրացին է և գտնվում է սրանից հարաւ—արեւելեան կողմը:

Փոքր Մասիսի բարձրութիւնն է 12,840 ոտ: Նաչափ ծովի մակերևոյթից:

Փոքր Մասիսի*) մասին ժողովրդի մէջ տարածված են պէսպէս առասպելներ, որոնք զանազան կերպով արտայայտում են ժողովրդի հա

յացքն այդ լեռան մասին: Մի քանիսը պատմում են, որ փոքր Մասիսի վրա կան վիշապներ և օձեր ահագին մեծութեան, այդ պատճառով խիստ դժուար է, համարեա անկարելի է նրա գագաթը բարձրանալ: Իրականը պատմում են, թէ գագաթը մեծ տափարակ տեղ է և վրէժ բաւականին մեծ լիճ կայ, իսկ օղը սաստիկ սառն է, մինչև անգամ յուլիս ամսին, երրորդները ասում են, թէ գագաթի վրա աղաւաւորների (հսկաների) գերեզմաններ կան: Երրորդները լսել են, որ գագաթի վրա ուղտերի քարվան կայ քարացած, նաև ուղտապանն էլ այնտեղ քարացած կանգնած է, մէկ ձեռով բռնած ունի առաջ: Նորոգ ուղտի սանձը, իսկ միւս ձեռին իր գաւազներ: Հասերը համոզված են որ բարձրանալու լեռն լեռան խորքերից կամ տակից մշտական լավում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ արտաճաղ կարող է լինել:

Այդ առասպելները, բայց մանաւանդ փոքր Մասիսի կազմակերպութեան ուսումնասիրելու ցանկութիւնը պատճառ եղան բարձրանալ այդ լեռան գագաթը, միւս կողմանէ, հայ լինելով ամօթ համարեցի ինձ համար, եթէ հայ մարդը Արարատը աչքի առաջ ունենայ և չաշխատէ մօտիկից տեսնել նրա այն մասերը, ինչ որ կարելի է տեսնել: Հայի անիծեալ անտարբերութիւնը զգում է հայը, երբ տեսնում է որ մի օր և է անդիլացի լճից ծովից եկել է Մասիսը տեսնելու և քննելու, իսկ Արարատեան գագաթի բնակիչները նաև չեն մտածում մօտիկից տեսնել այն՝ ինչ որ մեր դաշտի բնական և պատմական գեղեցկութիւնն է կազմում:

Դաւալու գիւղից կարելի է ուղիղ գնալ դաշտների Բուլբան կայարանը, որի հեռաւորութիւնը 2 ժամ ճանապարհ է, բայց ընկերներս ստիպեցին ինձ աւելի երկար ճանապարհով գնալ

մինչև այդ կայարանը: Բուլբանից 4 1/2 ժամում հասանք Մասիսների թաղը, որ գտնվում է մեծ և փոքր Մասիսների գագաթների ստորոտում: Այդտեղն անուանվում է նմանապէս Սարգար-Բուլբան: Սարգար-Բուլբանը մի խումբ դաշտների ամառանոց է: Արաքսից մինչև Մասիսների իսկ ստորոտը կը լինի մօտաւորապէս 20 վերստ: Երբ հասանք Մասիսների թաղը, այսինքն Սարգար-Բուլբան տեղը, մեր առաջ բացվեց մի մեծ կանանչ դաշտ: Այդ դաշտն անցնում է մեծ և փոքր Մասիսների գագաթների ստորոտով, որ տանում է Տաճկաստան և Պարսկաստան: Դաշտի երկայնութիւնը այդ ուղղութեամբ կը լինի 10 վերստ, իսկ գագաթների ստորոտների հեռաւորութիւնը 2—3 վերստ և գագաթները հեռու կը լինեն միմեանցից մօտաւորապէս 5—6 վերստ:

Փոքր Մասիսի ստորոտում այդ դաշտի վրա, ուռապ և պարսից կողմից կան զանազան տեղ թխտեւոյ (բէթեօւլ) փոքրիկ անտառներ: Այն քառանկիւնի ու տեղը, որ երևանից տեսնում ենք փոքր Մասիսի ստորոտում, ուռապ հողի վրա, դա է թխտեւոյ փոքրիկ անտառ, որի ծառերը ունեն 3—4 արշին բարձրութիւն: Դրանք բարակ թուփեր են: Պարսկաց հողի վրա, փոքր Մասիսի ստորոտում կայ թխտեւոյ փոքրիկ անտառ, որի ծառերը ունեն 2—3 սաժէն բարձրութիւն: Այդ նորաբոյս անտառները անինայ կտրում և ոչնչացնում են վրանաբնակ քրդերը և յոյս չը կայ որ այդ ծառի ցեղը աճի և բազմանայ Մասիսների ստորոտներում:

Յուլիսի 17-ին 1881 թ., առաւօտեան 4 ժամին ձիերով գնացին ղէպի փոքր Մասիսի ստորոտը և առաւօտեան 5 ժամին այնտեղ հասանք, որտեղից պէտք է ոտով բարձրանային: Երբ ձիերից իջանք, հարցրեցի իմ առաջնորդին:—

*) Մասն օթ. Արայ սրդի Արամայ՝ որ վասն գեղոյ իւրոյ գիման կոչեցաւ գեղեցիկ, պալադատեալ զհայս պատուեցաւ ի Նինոսէ: և նորոգ զարդարեաց զաշխարհս հայոց: յորմէ աշխարհս այն յորում էր գլխաւոր քաղաքն Արմաւիր, կոչեցաւ: Արարատ կամ Արարատ: յորմէ և բոլոր Հայաստան ևս և իշխանութիւն հայոց անուանեցաւ Արարատեան (3430 թ. Գրիգորոսից առաջ), Չամչեան

*) Մասն օթ. Ամասիս որդի Արամայիսեայ գլխաւն Արարատայ յիւր անուն անուանեաց Մասիս (3120 թ. Գրիգորոսից առաջ), Չամչեան

մի այդ գործից, կը հիմնի մի հիւանդանոց Մօզ-
դօկի մէջ: Պարոնը առաջարկում է որ Մօզդօկի
ամբողջ ժողովուրդը՝ ուռւ, հայ, նօղայ, չէր-
կէս, վրացի, մի ընդհանուր խնդրագիր տան կա-
ռավարութեանը, դատարանական գործից իրան
ազատելու համար: Եւ այն ժամանակ նա կը
հիմնի իր միջոցներով մի հիւանդանոց: Իսկ ե-
թէ չաղապէս և պէտք է ենթարկվի պատժին,
այն ժամանակ իր ամբողջ կարողութիւնը կը
նուիրի կրթութեան գործին: Նրա կարողու-
թեան տարեկան եկամուտը հասնում է, ինչպէս
ասում են, 20 հազար ռուբլ գումարի:

Մեզ գրում են Մօզդօկից, որ այդ քաղաքի
հայ քահանաները ամենայն գիշեր թուղթ խա-
ղալով են անցնում: Սրանցից օրինակ է առել և
ժողովուրդը:

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՅ, որ այժմ այդ
քաղաքում մի հիւանդութիւն կայ, որին զոհ են
գնում բազմաթիւ մանուկներ: Շուշեցիները, այդ
ախտին առաջն առնելու համար, որին կոչում են
գիւղաբան, մօտերս թափօր դուրս եկան, բայց
հիւանդութիւնը չարունակվում է և դարձեալ մա-
նուկները զոհ են գնում այդ ախտին:

Խոսել ենք որ մեր յայտնի հայագէտ, պ. Էմին,
հասել է արդէն Թիֆլիս, լինելու հնագիտական
ժողովին մասնակցելու համար: Ասում են որ ժո-
ղովի նիստերը կը սկսվեն սեպտեմբերի 8-ին:

Ստացանք պ. Գաբրիէլ Ստեղծականցից
(Փոլսից) զՕրինա՝ լրագրի համար 24 ըսելով
հետեալ անձինքներէ: Բագրատ Նաւասարդեան-
ցից և Գաբրիէլ Ստեղծականցից 8 ռ., Օհաննէս
Գորգենբէկից 8 ռ., Նիկողայոս Զոհրաբեան Միր-
զոյեանցից 8 ռ.: Առաջվայ փողերի հետ կանի
429 ըսելով:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԻՆՊԻՐ

Մայրաքաղաքիս զեսպաններէն ոմանք,
որք ժամանակէ մը ի վեր բացակայ կը գը-
անվին, Կ. Պօլսի դառնալ կը սկսեն: Ռու-
սական զեսպան պ. Նօվիկով արդէն հասաւ
և զեսպանական ժողովին ալ ներկայ գտն-
վեցաւ առջի օրը: Քրանսիական զեսպան

են և քարերն աւելի և աւելի աչքի են ընկնում:
Եւր բարձրութեան կէսն անցանք, արդէն ան-
կարելի եղաւ մարմինն ուղիղ բռնած բարձրա-
նալ, և ստիպված էինք առաջ գնալ չորստանի
համարեա երկու ժամ շարունակ: Ինչքան բարձ-
րանում էինք, այնքան աւելանում էր հրա-
բլիւնային քարերի քանակութիւնը և առաջ
գնալը դժուարանում էր: Եւ մեծ զրուշուրեամբ
էի ոտս դնում իւրաքանչիւր քարի վրա (հազած
ունէի համադանի թիկազօրծ կօշիկներ, որ չառ
յարտար են այդպէս ճանապարհորդութեան ժա-
մանակ) կամ ձեռով բռնում քարից, որովհետեւ
այդ քարերը կարծես թէ մի պատճառի էին ըս-
պասում տեղաշարժ լինելու համար: Եթէ այդ
քարերից մէկը գլորվէր, հեռը պէտք է տանէ,
հարկաւոր իր նման, նաև իրենից մեծ քարեր և
առաջին գոյը կը լինէր մօտի մարդը, իսկ յետոյ
նրա յետեւից բոլոր բարձրացողները: Եւր բաւա-
կանին բարձրացել էինք, տեսանք որ մեզից
չառ ներքեւ ամպեր են լողում օդի մէջ. զրանց
շարժվելուց և ահագին բարձրութիւնից ներքեւ
նայելուց, գլուխս պտտում էր այն աստիճանի,
որ յոյսա, մի բույն, կարմիր գազաթը հասնե-
լու: Իմ հոգեկան այդ տանջանքը չը յայտնեցի
ընկերներին, որպէս զի չը յուսահատեցնեմ նը-
րանց, բայց ընկերներս շուտով իրենք յայտնե-
ցին որ նրանց գլուխները պտտում են: Մենք
ստիպված էինք իւրաքանչիւր 10 քայլ հանգա-
տանալ, որովհետեւ օդը անօքսիգենում և մեր շնչա-
ռութիւնը արգելում էր: Երբեմն օձի պէս սո-
ղալով երբեմն մէկ քարից միւսի վրա թռչելով
հասանք այն տեղ, ուր բարձրանում էր պարս-
պան քարափը:

Բարձրանալուս կարծում էինք, որ այդ քարա-
փը պէտք է լինէր դազաթի վրա, բայց տեսանք
որ դեռ կան երեք բարձրութիւններ անցնելու

պ. Տիսա ալ այսօր փարիզէն կը մեկնի և
հաւանականաբար գալ շաբթու հոս պիտի
գտնվի:

„Phare du Bosphore“ լրագիրը կըսէ
թէ զեսպանաց ներկայութիւնն այժմ
անհրաժեշտ է ի Կ. Պօլսի, վասն զի բա-
րենորդմանց խնդիրը որ ենթակայ ժողո-
վուրդը մեծապէս կը զբաղեցնէ, պիտի
սկսի: Ստոյգ աղբիւրներէ տեղեկութիւն
կուտան մեզ, կը յաւելու „Ֆար“ լրագիրը,
թէ լօրդ Կիւֆըրին, որ ըստ մօզ անի
վերջանալուն կը սպասէր, այսօր վաղը
հայ կ ա կ ա ն խնդրոյն վերաբերեալ բա-
նակցութեան (61-որդ յօդուածին) պիտի
դիմի, և արդէն վերջին զեսպանական ժո-
ղովցի մէջ այս խնդիրը օրակարգն անցեր է,
մինչև իսկ կը հաւաստեն թէ զեսպանք
խորհրդէն են որ մինչև հարկ եղած կանօնա-
գրութեան պատրաստութիւնը Հայաստանի
մէջ այժմէն քանի մը միջոցներ գործադրե-
լը պատշաճ չէ, արդեօք:

„Stamboul“ կըսէ թէ իտալական զես-
պան կօրտի կոմիտի նախագահութեամբ կազ-
մեալ վերջին զեսպանական ժողովին մէջ
հայկական խնդրոյն վրա երկար խորհրդա-
ցութիւն մը տեղի ունեցեր է:

„Ֆար դիւ Բօսֆօր“ լրագրի մէջ Հայաս-
տանի վերաբերեալ հետեալ տողերը կը
կարդամք:

„Ներէկ հրատարակեցինք թէ զեսպաննե-
րը մտադիր են քննելու թէ մինչև Հայկա-
կան խնդրոյն կարգադրութիւնը այժմէն
Հայաստանի մէջ քանի մը միջոցներ գոր-
ծադրելը պատշաճ չէ արդեօք: Այսօր կը
հաւաստեն մեզ թէ լօրդ Կիւֆըրին մտա-
դիր է անմիջապէս Հայաստան լիազօր պաշ-
տօնեայ մը ղրկելու առաջարկութիւնն
ընել, որոյ պաշտօնը պիտի ըլլայ անգլիա-
կան ընդհանուր հիւպատոսաց հետ համա-
ձայնութեամբ բարեկարգական քանի մը
միջոցներու ձեւանալիք: մինչև որ հայկա-
կան խնդիրն իր վերջնական լուծումը գըտ-
նի:“

(Հայրենիք)

մինչև գազաթը հասնելը: Այս պարսպան քա-
րափի տակ հանգստացանք, Կա աւազաքարից է
կայացած և վեց սաժէնաշափ ուղիղ բարձրանում
է, դարձնելով իր մի երեք զէպի արևմուտք:
Եւ նստած էի այդ քարափի տակ երես դարձ-
րած զէպի հիւսիս—արևելք: Իմ առաջ կանգնած
էին այն երեք բարձրութիւնները, որոնց վրայից
անցնելով պէտք է գազաթը հասնէինք: Այդ
բարձրութիւնների աջ և ձախ կողմից, այսինքն
մեծ Մափիսի և Պարսկաստանի կողմից, փոքր
Մափիսը սկզբից մինչև վերջ, աւազուտ և մասն-
րաբարտ լինելով քանդակ է: Այդ տեղից ներքեւ
նայելը զարհուրելի է: Այդ երկու կողմից փլած-
ներէ մէջ մնացել է մի արշին լայնութեամբ ճա-
նապարհ, որով մենք պէտք է գնայինք զէպի գա-
զաթը:

Այս սարսափելի ճանապարհը մեր առջին էր,
երբ յանկարծ լսեցինք երեք անգամ վրալրա
հրացանի որոտում: Իմ առաջնորդ Մարտիրոսը
երկու զապալի հետ մեզից առաջ էր գնացել և
գազաթից տեսնելով որ մի ահագին արջ ուղե-
ւորվում է հեռուից զէպի մեր կողմը, վրաւորել
էր նրան գնաղկով:

Չայրացած արջը գլորում էր Պարսկաստանի
կողմը ահագին քարեր, որոնք բարձրացնում էին
մի աստիճանի դրողոց:

Եւ առաջարկեցի ընկերներին բարձրանալ:
Մտեցանք մի արշինանոց լայն ճանապարհին և
բարձրանում էինք չորստանի: Բարեբաղդա-
բար փչում էր բարակ քամի, բայց եթէ քամին
սաստիկ լինէր, անկարելի կը դառնար այդ նեղ
ճանապարհով անցնելը: Վերջապէս անցանք ե-
րեք բարձրութիւնները և հասանք գազաթը: Նա-
յեցի և տեսայ որ 10 ժամէն, ուրեմն բարձրացել
էինք 5 ժամում: Փոքր Մափիսի գազաթը կուշե-
նայ իր շուրջը 1000 քայլ, տափարակ չէ, այլ

ԱՆԳԼԻՍ

Անգլիական ներքին գործերի մինիստր
Հարիօրի ճառը, որով նա իրանգական մի-
ութիւնը նմանեցնում էր „յանցաւոր“ ֆե-
նիկների հետ, մեծ անբաւականութիւն յա-
բուցեց իրանգիայի մէջ: Կալուածական մի-
ութեան ժողովի ժամանակ Սեկստօն Հար-
իօրին անուանեց „մինիստրական պանտե-
րա“, իսկ մի ուրիշ ճառախօս նրան անուա-
նեց „անամօթ խաբեայ“: Ֆերմենները շա-
բուհակ հրաժարվում են կալուածական տուր-
քի վճարելուց և կալուածատէրերից շատերը
չը կարողացան հաւաքել իրանց հունձը:
Ճողովորի և պոլիցիայի մէջ անդադար
կոնիներ են պատահում: Իրանգացիների
լուծիւնը կալուածական նոր օրէնքի մա-
սին ապացուցանում է, որ կալուածական
միութեան մէջ խիստ կարգապահութիւն է
տիրում: Վերջինը վճռեց, որ առ այժմ ոչ
մի ֆերմեր չը դիմէ կալուածական նոր
դատարանին, մինչև ինքը միութիւնը մի
քանի զէպերում չը փորձէ այդ դատարա-
նը: Սեպտեմբերի 15-ին կը հաւաքվի Կուր-
լինի մէջ Պարսիկի հիմնած ազգային
միութիւնը, որը պէտք է իր վերջնա-
կան կարծիքը յայտնէ կալուածական նոր
օրէնքի մասին: Իւրաքանչիւր մարդ, որ
դրանից առաջ կը յայտնի իր կարծիքը,
դաւաճան կը ծանաչվի: Կալուածական մի-
ութիւնը յոյս ունի այդպիսով հաստատ
պահել իր ազդեցութիւնը իրանգիայի վրա:
Նա մի դրական պրօգրամ կորոշի, որ ան-
հրաժեշտ կը դարձնի նրա գործունէու-
թիւնը:

Լօնդօնի լրագիրները, քննելով պարւա-
մենական գործունէութեան վերջին շրջա-
նը, առանձին բաւականութիւն չեն յայտ-
նում Անգլիայի այժմեան դրութեան մասին:
Գլադստօնի իրագործած միակ նշանաւոր
վերանորոգութիւնը դեռ ևս ցանկալի հե-
տեանքներ չէ ունեցել, մինչդեռ նախկին
անիրաւացի յարաբերութիւնները իրանգա-
ցիների հետ զգալի են լինում ամեն քայ-
լափոխում: Իրանգիայի մէջ կատարվող ան-

կարգութիւնների պատճառով իրանգական
գործերի մինիստր Ֆորստեր շատ անգամ
այնպիսի ճառեր և սպառնալիքներ է ար-
տասանել, որոնք միշտ վնասել են իրան-
գիան ինգլանդեցիներ գործին և աւելի էլ
գրգռել են թշնամութիւնը նրան արմատա-
խիլ անելու փոխարէն: Գործադրված պոլի-
ցիական խիստ միջոցները միշտ վնասել
են կառավարութեան ընդհանրապէս վերա-
նորոգիչ քաղաքականութեան պատու-
թեանը: Արտաքոյ կարգի օրէնքներով շըր-
ջապատված իրանգիան ինքն էլ արտաքոյ
կարգի դրութիւն ստացաւ. նա գրեթէ ամ-
բողջապէս ենթարկվեցաւ կալուածական
միութեան և նրա առաջնորդ Պարսիկի ազ-
դեցութեանը և այդպիսով կենտրոնացրեց
իր բոլոր ոյժերը և միջոցները անյիսկան
կառավարութեան հետ մաքառելու համար:
Այն ջերմ համակրութիւնը, որով առաջ
ընդունվեցաւ կալուածական օրինադրը իւր-
անգիայի մէջ, այժմ կատարելապէս անհե-
տացի է:

Բացի իրանգական կալուածական օրէն-
քից պարլամենտը հաստատեց մի օրինագիծ
մամուլի վերաբերութեամբ: Այդ օրէնքի
համեմատ լրագիրները ազատվում են պա-
տասխանատուութիւնից այն ճառերը ապելու-
համար, որոնք արտասանվում են հասարա-
կական ժողովների ժամանակ և որոնց մէջ
վերաւորող մի բան է լինում մի մասնաւոր
անձի պատուի դէմ:

ԱՄԵՐԻԿԱ

Գարֆիլդ նորերումն ինդերն էր, որ նը-
րան „Սպիտակ տանից“ տեղափոխեն Մեն-
տօր կամ Մօնրօէ ամրոցը: Բժիշկները խոր-
հրդակցեցին, թէ արդեօք կարող է Գար-
ֆիլդ ծովով տեղափոխվել և վճռեցին, որ
ներկայումս անկարելի է տեղափոխել հի-
ւանդին, թէպէտ այդ բանը ցանկալի կը
լինէր կատարել: Ոգոստոսի 25-ին պահա-
պան բժիշկները նկատեցին, որ նախագա-
հի առողջութիւնը վատանում է: Հիւանդը

թէ նկար է, և որ ազգին է պատկանում:
Այս հարցը թողնում եմ հնազանդների քննութեա-
նը: Տափարակի արեւելեան կողմում կիսալուսնա-
նա շարած են մէկ արշին բարձրութեամբ մի-
մեանց վրա դնալու անտաշ քարեր, որի ու-
ղեցիկ և բարձր կողմը դարձրած է զէպի հարաւ:
Կրանից մի քանի քայլ հեռու շարած են
փոքրիկ, մէկ զրփանքանոց քարեր այն կերպով,
որ ձևացնում են քառակուսի չիքան, ուղիղ և
ոլորուն գծեր: Այդպէս շարած փոքրիկ քարերը
և կիսալուսնաձև դարձված անտաշ քարերն ե-
րևի ազգային նախապաշարմունքների հետեանը է:
Ժողովրդի մէջ կարծիք կայ, թէ մի օր և է կնոջ
օկը գրաւելու համար, մարդ պէտք է ենթարկէ
իրեն դանազան դժուարութիւնների: Այդպէս
բաների հաւատացողները անկասկած պէտք է
կրողում տեսնեն իրանց սիրածին, որ պատրաս-
տութիւն է յայտնում սիրել և անձնատուր լինել,
եթէ այս ինչ կամ այն ինչ դժուար գործը կա-
տարէ:

Երևի մի վառվառն երիտասարդ երազում պա-
ռաւ կնոջից կամ իր սիրած գեղեցկուհուց հրա-
ման ստացած կը լինէր բարձրանալ փոքր Մա-
փիսի գազաթը, ի հարկէ մի ամենադժուար ճա-
նապարհով, դարձել փոքրիկ քարերը այս ինչ
ձևի, կարելի է նաև հրամայած լինէր գիշերը
քնել այն տեղ, որի համար երկուստարդ պէտք
է անտաշ քարերից կիսալուսնաձև ապաստան չի-
նէր քամից պաշտպանվելու համար: Այս դե-
ժուարութիւնները տանելուց յետոյ, պէտք է վե-
րադառնար և ստանար խոստացած կամ երեւ-
կապած վարձատրութիւնը: Ահա որտեղից ծագած
պէտք է լինի քարերի այդ տեսակ շարվելը:

Հրաբուխի բերանի մասին կարելի է տալ
հետեալ բացատրութիւնը. հրաբուխի բերանի
կիսալուսնաձև մասը, որ իր ուղուցիկ կողմով

անհանգիստ էր և անհասկանալի բառեր էր արտասանում:

Հասարակական կարծիքը Միացեալ Նահանգներին մէջ այն տեսութեամբ եղբայրացութեան է հասնում, որ նախագահ Կարֆիլդ կենդանի չի մնայ: Այդպիսով ստպարեզ է դալիս փոխնախագահ Արչերի անձնաւորութիւնը, որ առ այժմ մնում է Նիւ-Իորքի մէջ, ոչ մի հասարակական յայտնութիւն չէ անում և չէ տեսնուում լրագրիչներին աշխատակիցներին հետ: Այն արժանաւորութիւնը, որով նա իրան պահում է նախագահ Կարֆիլդի վերաորովեց յետոյ, նրան համակրելի դարձրեց: Հաւատացնում են որ նա վճռել է խոհանութեամբ կառավարել երկիրը և չենթարկվել ոչ մի կուսակցութեան ազդեցութեանը, եթէ իշխանութիւնը նրա ձեռքն անցնի: Մինիստրութեան անդամները վճռել են հրաժարվել իրանց պաշտօններից, եթէ Կարֆիլդ վախճանվի և իրանց այդ վճիռը յայտնել են փոխնախագահ Արչերին: Բայց նա ցանկանում է, որ մինիստրներից մի քանիսը մնան, որպէս զի ապացուցանէ, որ նա մտադիր չէ ենթարկվել որ և է կուսակցութեան ազդեցութեանը: Դոմայնի մինիստր Բենն և պատերազմական մինիստր Լինկոլն անպատճառ կը մնան իրանց տեղերում և գուցէ դեռ ուրիշներն էլ մնան: Կլաւսոն քարտուղար Բլեն անպատճառ կը հրաժարվի: Առհասարակ կարծում են, որ Արչեր ընդամենը երեք կամ չորս մինիստր կը փոխէ:

ՆԱՄՄԱԿ ԹԻԻՐԻՔԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 18 օգոստոսի 1881

Եթէ հայաձանքի և պարսաւի արժանի են մեր մէջ գտնված մի քանի անարժան հոգեւորականները, նոյնչափ յարգելի են և համակրելի նոքա, որոնց գործը վկայում է նոցա հայրենասիրութեան և անհաշիւղիք արարքների մասին: Օրինակ Ներսէս պատրիարքը, օրինակի Կարաբեքչի Նախկին առաջնորդ Փիլիպպոս եպիսկոպոս Նալբանդը: Այս անձնուէր և քաջաճիւղի ծնունդին, որին ծանօթ եմ ես դեռ Էրզրումից,

դարձրած է դէպի հարաւարեւմուտք, է հրաբուխի նախկին բերանի մի մասը: Հրաբուխը երկար ժամանակ հանգած մնալուց յետոյ, սկսել է կրկին, բայց թիթեկ կերպով և կարճ ժամանակով կրակ ործալ և ոյժ չունենալով դուրս թափել իր մէջի քարերը, բարձրացել է դրանց և քարերը կանգնել են հրաբուխի բերանի հիւսիսարեւելեան մասում, հրաբուխի ճիւղ բերանից փոքր ինչ բարձր, որ այժմ տափարակ տեղ է կազմում, ունենալով իր մէջտեղը մի փոս լցրած մեծ քարերով, որ հրաբուխի վերջին բերանն է ձևացնում, թողնելով հարաւարեւմտեան կողմում ճիւղ հրաբուխի բերանից կիսաշուշանաձեւ մաս իր տեղում:

Երկու գերեզմանաքարերը, որ գտնվում են փոքր Մասիսի գագաթի վրա 1614 թվականից (այսինքն 267 տարի մեզից առաջ) ապացուցանում են որ վերջին 267 տարուց միջոցում փոքր Մասիսը նաև 1840 թ. չէ մասնակցել մեծ Մասիսի շարժմանը, որ նշանակում է թէ փոքր և մեծ Մասիսները միմեանց հետ ստորերկրայ հաղորդակցութիւն չունեն, այսինքն միմեանցից անկախ: հրաբուխներ են և փոքր Մասիսը ինչպէս հրաբուխը 267 տարի է որ գոցված է: Եթէ երրորդ քարի նկարը քննեն, կարելի է ապացուցվի թէ փոքր Մասիսն ինչպէս հրաբուխի, աւելի երկար ժամանակ է որ հանգած է: Ինձ հետաքրքիր էր խմանալ գագաթի օդի տաքութեան աստիճանը. չափելով տեսայ, որ յուլիսի 17-ին, զեղեցիկ եղանակին, բարակ քառանկյունի թանաք, առաւօտեան 11 ժամին, արեւի տակ, բեմբուրի ջերմաչափը ցոյց էր տալիս 17 աստիճան տաքութիւն, իսկ չուարում 13 աստիճան: 12 ժամին փչեց փոքր ինչ սառը քամի և յանկարծ արեւ տաք օդի տաքութիւնը իջաւ մինչեւ 10 աստիճանի:

հանգուցեալ Լազարեւի նորա գրած համարձակ հայրենասիրական գրութիւններից, որին ծանուցում է Կ. Պոլիսը Հայաստանի մէջ նորա արած արհեստի հաղագիրական գործերին ակնատես վկայ պ. Բարութիւն Բեշքեկեանի պատմելով, այս օրերս Կ. Պոլիսի մամուլի մէջ կատարեալ օրուայ հերոս հանդիսացաւ: Նորա գրած նամակը «Stamboul» լրագրին և աղբյւր բողբոջը ու ամբաստանադիրը ոճրագործ քերթը թէյերի արդարացման դէմ, արժանապատ քոյոր օտար մամուլի լի ու լի գովասանաց: Իր այդ նամակով յարգելի եպիսկոպոսը մի այնպիսի հարուած տուաւ քերթը թէյերի գործին, որ հարկէ թէ որ և ինչ մասնիչների վկայութիւնները, որոնք մի ժամանակ Կարաբեքչիի մէջ միացած դաւեր էին լարում կորովի ծերունի Փիլիպպոսի դէմ, կամ բարեխօսութիւնները Բ. Գրան առաջ, կարող լինեն այսուհետ մի բանի տեղ անցնել: «Ոչ ոք չէ կարող այնպէս լաւ վկայ լինել քերթը թէյերի արարքներին, բացակայում է քաջաճիւղի եպիսկոպոսը Stamboul-ի մէջ, ինչպէս և ես պատրաստ եմ իմ ամբաստանադիրը պաշտպանել անձամբ որ դատաւարի տալ լինի հարկաւորը գործի փաստերով, որոնցից իւրաքանչիւրը կը վկայէ բազմաթիւ անմիջ գոհերի համար: Անձ ինչ լեզուով է խօսում պատկառելի ծերունին. անձ վերջապէս մի բարձր հոգեւորական անձ, որը Հայաստանի մի կարեւոր կենտրոնում այնչափ տարիներ գործելով, ուրիշ բան չէ կարողացել տանել իր հետ, բացի ժողովրդի կրօնատաղիւթութիւնը, սէրը և գործը: Եւ նա արժանի է եղել այդ ամենին, որովհետեւ քանիցս իր կուրծքն է մերկացրել տաճկաց զինուորների սուլթանների առաջ, երբ նոքա հետամուտ են եղել ձերբակալելու այս ինչ, այն ինչ հայը իր պատասխան և խաղաղարար Նոյն բաները այդ պատուելի անձի համար պատմում են նոյնպէս և այսուով ժամանակաւորապէս գտնվող զէյթունցիք: Բայց ինչու այսպիսի մի գաղափարի մարդ, մի անշահաբուն, զի ու հայրենասէր անձ դատաւարութեամբ է իշխում մի քանի զանազանութեան, արհամարհանքին և նախ հայաձանքին. չը լինի թէ նորա համար, որ այդ արժանալից ծերունին չը մտածեց՝ իր բազմամեայ առաջնորդութիւնից զանազան տեղեր այնչափ շահվել, որ կարող լինէր այսօր փոխանակ դարձակ գրպանի, ունենալ Մանկունու համար գոնէ մի քանի բուռ ոսկի. ցաւ է տեսնել այսչափ անարդարութիւն, վառն որոյ փոխանակ հեռու անկիւններում որոնելու թիֆլիսի առաջնորդ, ահա ձեզ մի մարդ, որ ըստ կենսաբան այդչափ ազդեցութեան է եղել և փառաւոր:

Տեսարանը փոքր Մասիսի գագաթից զեղեցիկ է. հիւսիսային կողմից փակում է մարդու առաջ Արարտեան լայնատարած դաշտը: Արարտեան Երասխը սպիտակ ժապաւենի նման հազար ու մի զանազան պտղատեր անտառի անդամական իր դրոշմներին, լաւագին հորձանք տալով, օգտակար օժի պէս առաջ է սողում մոլեգին: Արարտեան ձախ կողմի գիւղերը կանանչ ծառերով պատած, հեռուց նմանում են օսպիւսներին, որ պատած են ցորենի: զեղեցիկ դաշտերով: Գագաթից երևում են Կարապաղեալի (Հայոց Ձոր): Սկանայ *) կամ Գեղամայ ծովի և Կարաչի-չաղի (Կաղից Ձոր) լեռները: Արեւմտեան կողմի կողմում երևում է մինչև Բաշտորաշէն գիւղը, որ երևում է Երևանից 79 վերստ և Նախիջևանը ամբողջաբար է թանձր օդում: Բաւականին մեծ բլուրների շղթայ անցնելով Արարտեան դաշտը, բաժանում է Դարուրայ դաշտը Արարտեան դաշտից, թողնելով մի փաթիկ անցք. որ

*) Արամայիս որդի Արմենակայ անուանեաց զգեան յանուն թողին իւրոյ կրօնատաճիկ Երասխ (3030 թ. Քրիստոսից առաջ): Չամչեան

*) Գեղամ որդի Ամանայ հետեալ յեղին Սկան ծովու շինեաց անդ իւր չէին և աւանս և բնակարանս, զորս և կոչեաց Գեղարքունիս, և զլեռնս որ անդ կայր՝ անուանեաց Գեղ կամ Գեղամ. յորմէ և ծովակն այն կոչեացաւ ծով Գեղամայ (3,202 թ. Քրիստոսից առաջ): Հիմայ Սկան կղզու անունով, կոչվում է Սկանայ ծով: Չամչեան

*) Արմենակ որդի Հայկայ անկեաց անտառ մեծ՝ սոսնաց, և լեռնս զայն կոչեաց յիւր անուն Արագած այսինքն Արմենագած, իբր թէ Արմենակայ տեղի (1974 թ. Քրիստոսից առաջ): Չամչեան:

ինչու չը վարձատրել նորան իր արած այդչափ ծառայութիւնների համար գոնէ կենսաբան վերջին օրերը մի հոնգիստ տեղ վայելուէ վիճակ տալով: Եւ ինչպէս կարելի է արժանաւորներին անարժաններից որոշել...

Փիլիպպոս եպիսկոպոս Նալբանդի նամակը Stamboul-ի մէջ այնպէս սեռ սացիա արեց, որ ամեն կողմից հարցնում են նորա համար թէ՛ ճիշդից է և ո՛վ է, որը մինչև հիմայ միայն Կ. Պոլիսի ինտելիգենցիային անյայտ է մնացած. որչափ զարմանք սոցա համար, երբ յայտնվում է, որ ուղարկութեան յանկարծակի արժանացած մարդը ուսումնաւ է, կարծեմ Դամասիոս քաղաքից:

Այսպէս թէ այնպէս, բայց Նալբանդի եպիսկոպոսի շնորհիւ 53 քերթը թէյերը, որոնք գրեթէ ազատվելու վրա էին, կրկին գրաւելով դեպքանների ուղարկութիւնը, դեռ երկար ժամանակ կը սպասեն իրանց արձակման, եթէ միայն այդ էլ կարողանայ տեղիք ունենալ այսուհետեւ Անձ ինչ կը նշանակէ օտար մամուլ, մինչդեռ նոյն նամակը Մասիսի կամ այլ լրագրի մէջ պիտի մնար առանց որ և է հետևանքի...

Այն կաթողիկոսի հարցը նոյնպէս չառ է դրուում այստեղի հայերին և ազգային ժողովրդը բանը բանից անցել է, պոլսեցիք նոր են արթնանում և ձայն բարձրացնում կաթողիկոսի «ազգապետ» ընթացքի դէմ, բայց ինչու էին քնած սոքա ամբողջ ինքը ամիս, էլ հարցնող չը կայ:

Հայոց հարցը օրակարգի մասնուց յետ, հետաքրքիր երազներ են տեսնում հայ էֆենդիները. նոցա զարթը են փոխադարձ նախանձը հիմայ նորա մէջ է թէ՛ որը իրանցից պիտի լինի Հայաստանի կառավարիչ: Այս օրերս Բակըր Գաղափեան, որը կայսերական պալատի վերափոխուէն է (ministre de la liste civile) ստացաւ Օսմանիէ առաջին աստիճանի, որ ի հարկէ շատ ցաւ պատճառեց մնացած հայ էֆենդիներին, որոնք էլ սրտված բան համարեցին Բակըր Գաղափեանի կառավարիչ լինելը. անձ ձեզ մի շօշափելի բացատրութիւն հայ էֆենդիների ազգային գործերի մէջ խառնվելու և իրանց ազգասէր յայտնելու երեւոյթին:

Իսկ գալով թիֆլիսի գործերին, բաւական ձայն է հանում այստեղ թիֆլիսում լինելի այս տարուայ վարժապետական ժողովը. չը գիտեմ ո՛վ էր առաջարկում կարծեմ «Մշակ» մէջ թէ՛ թիֆլիսի Կ. Պոլիսն էլ իր կողմից ներկայացուցիչ ուղարկէ այդ ժողովին: Բայց միթէ այդ առաջարկութիւն անողը մինչև հիմայ դեռ հասկացո-

ղութիւն չը ստացաւ Կ. Պոլիսի մտաւորապէս անհարգացած ինտելիգենցիայի վրա, որի «ամենափորձառու» և «գիտնական» ներկայացուցիչը ապրում է ձեր մէջ ամբողջ երկու տարի. տեսե՛ք նորան և իմացե՛ք միտերին... Բայց հետաքրքիր է իմանալ՝ արդե՞ք ձեր թիֆլիսի վարժապետական ժողովը պիտի ուղարկութեան առնէ «Մշակ» դեռ նորերս արած առաջարկութիւնը՝ մտցնել հայոց ուսումնարաններին մէջ գործնական ուղղութիւն և նաև սկզբնական արհեստներ այդ ուսումնարանները հասարակութեան համար դրախտ անելու համար: Եթէ դարձեալ հետևե՛ք հին ընթացքին, շատ բան չը պիտի առաջանէք, թէկուզ մտցնելով եւրոպական ամենակատարեալ մանկավարժական սիստեմը մեր կտուրը միշտ ծակ և պատերը փչած երկսեռ վարժարանների մէջ: Նախ հարկաւոր է գաւառացի աղքատ ժողովրդի պահանջը ուղարկութեան առնել, իսկ յետոյ ժողովրդի թիֆլիս «գիտնական» նախնիքի վրա վիճարանելու համար:

Ուղարկում եմ ներկայեալ Փիլիպպոս եպիսկոպոսի նամակը Stamboul-ին:

Կրեդոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 31 օգոստոսի Պետական բանկի 50% տոմսով առաջին շրջանի արժէ 96 ռ. 87 կ., երկրորդ 94 ռ. 25 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսով արժէ 228 ռ. 50 1/2 կ., երկրորդ 223 ռ. 50 1/2 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսով արժէ 90 ռ. 75 1/2 կ., երկրորդ 90 ռ. 75 1/2 կ., երրորդ 90 ռ. 87 կ., ոսկի 7 ռ. 60 կ.: Ռուսաց 1 ռ. 1 լուգոնի վրա արժէ 26,9 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 223 մարկ, 5 պֆ., ֆարդի վրա արժէ 275 ֆրանկ 75 1/2 սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ելին տարածութեան մէջ: Խաղաղութիւնը տիրում էր ամբողջ երկրի վրա, և ես այդ րօպէին մտաբերեցի այն տեսարանը, որ բարձր տարից Մեֆիստոֆելը ցոյց էր տալիս Ֆրաուսին աշխարհի գեղեցկութիւնները:

Մեր իշխել տեսց 1 1/2 ժամ և հետո բերեցի մի խորշին քար:

Հանապաճորդութեան հետևանքը:

- 1) Ժողովրդի պատմածները ստու են:
- 2) Փոքր Մասիսի վրա լիճ չը կայ և չէ կարող գոյանալ:
- 3) 267 տարուց աւելի է որ փոքր Մասիս առաջուց հրաբուխ լինելով հանգել է (1614 թ. գերեզմանաքարն ապացուց է):
- 4) 1840 թ. չէ մասնակցել մեծ Մասիսի ործալում (գերեզմանաքարերը ապացուց են):
- 5) Փոքր Մասիսը չունի ստորերկրայ հաղորդակցութիւն մեծ Մասիսի հետ (1840 թ. չէ մասնակցել ործալում):
- 6) Կարելի է որ Փոքր Մասիսն ինքնակախ հրաբուխ է եղել:
- 7) Փոքր Մասիսը գոյացած է ոչ լեռ, ամուր քարերից, ինչպէս մեծ Մասիսն է, այլ լաւայից և աւազաքարից:
- 8) Հին բերանից մնում է կիսաշուշանաձեւ մարդ և գոյացել է երկրորդ բերան:
- 9) Գագաթի օդի տաքութիւնը յուլիս ամսի գեղեցիկ եղանակին, արեւ տակ, հասնում է մինչև 17 աստիճանի, իսկ չուարում 13°.

Բժ. Լևոն Տիգրանեան

